ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

ИНДЖИКЯН О. Г., Буржуазия Османской империи, Ереван. 1977, 314 стр., цена 2 р. 34 к.

ԻՆՃԻԿՅԱՆ Հ. Գ., Օսմանյան կայսրության բուրժուազիան. *Երևան, 1977, 314 էջ, գինը 2 ռ. 34 կ.։*

Մերձավոր Արևելքի խոշորագույն պետությունների մեկի՝ Օսմանյան կայսրության բազմազգ բուրժուազիայի ծագման և զարգացման պրոբլեմը մինչև վերջերս չէր գարձել հատուկ ուսումնասիրության առարկա։ Ճիշտ է, քննարկվել են ֆեոդալական հարաբերությունների քայքայման և կապիտալիստական հարաբերությունների առաջացման հարցերը, լուսաբանվել է Օսմանյան պետության տնտեսական պատմության այս կամ այն ասպեկտը, սակայն հետազոտողները բավարարվել են միայն երկրի տնտեսական վիճակի ընդհանուր բնութագիրը տալով, հաճախ սոսկ արձանագրելով այն առանձին երևույթները, որոնք բնորոշ էին նրա պատմական անցյալի այս կամ այն շրջանին։ Մանրամասնորեն ներկայացվել են հատկապես օտար կապիտալի ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման գործում, նրա ներթափանցման ուղիները և ձևերը։ Այսպիսով, գլխավորապես վերլուծվել են Թուրքիայի տնտեսական զարգացման վրա ազդող արտաքին գործոնները։ Այս տեսակետից պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. Ինճիկյանի ներկա աշխատությունը հաճելի նորություն է սովետական պատմագիտության համար։

Օսմանյան կայսրության տնտեսական պատմության կարևոր խնդիրների ուսումնասիրությունը, մասնավորապես՝ կապիտալիստական հարաբերությունների ծագման ու զարգացման պրոցեսի առանձնահատկությունների լուսաբանումը և «օսմանյան» բուրժուազիայի ձևավորման պատկերումը՝ կոնկրետ փաստերի վերլուծությամբ, հնարավոր է դարձել բազմապիսի գրականության, մամուլի, արխիվային նյութերի օգտագործման շնորհիվ։

Հեղինակը ցույց է տվել Օսմանյան կայսրությունում ֆեոդալիզմի քայքայմանը զուգահեռ բազմազգ բուրժուազիայի (այսպես կոչված «օսմանյան» բուրժուազիայի) ձևավորման մի շարք առանձնահատկությունները, ընդգծել այլազգի, գլխավորապես ոչ մուսուլման ժողովուրդների (սլավոնական, հունական, հայկական և հրեական) բուրժուազիայի ծագման ու զարգացման յուրահատկությունները, որոնց հետևանքով բուրժուազիայի հիշյալ խմբերը երկար ժամանակ կարևոր դեր էին խաղում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում։

Հ. Ինճիկյանը քննարկում է գյուղատնտեսության մեջ ապրանքափողային հարաբերությունների զարգացման պրոցեսը, արդյունաբերական և արհեստավորական արտադրության, ինչպես նաև առևտրի աճը երկրի տարբեր շրջաններում, հաղորդակցության ճանապարհների ցանցի ընդլայնումը և այդ բոլորի հետևանքով ներքին շուկայի գոյացումը։

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական պրոցեսների նման ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել բնորոշելու այն հանգամանքները, որոնցով պայմանավորված էր երկրի զարգացման չափազանց դանդաղ, դժվարին և հիվանդոտ ընթացքը, հատկապես կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, որ գամընկավ երկիրը կիսագաղութ դառնալու պրոցեսի հետ։ Միաժամանակ ի հայտ են բերված թուրք ազգային բուրժուազիայի հետամնացության և դանդաղ զարգացման պատճառները։ Այս ամենով պայմանավորված իրավիճակը՝ երբ տասնյակ տարիներ կայսրությունում հիմնական դեր է կատարել այլազգի բուրժուազիան, հանդիսանում է հենց երկրի տնտեսական զարգացման յուրահատկություններից մեկը։ Հեղինակը նշում է նաև երկրի կառավարման թուրքական վարչաձևին հատուկ թերությունները և այդ պայմաններում կամայականությունների ու անօրինականությունների բնականոն լինելու հանգամանքը։

Վերլուծելով թուրքական ֆեոդալական կացութաձևի, կայսրության ռազմական և բյուրոկրատական ապարատի դերի, թուրք և քրիստոնյա ժողովուրդների զարգացման մակարդակի տար-

բերությունների և տիրող վերնախավի ազգային քաղաքականության ազդեցությունը տնտեսական կյանքի առաջընթացի վրա, բուրժուազիայի ազգային առանձին խմբերի դերն ու տեղը երկրի տնտեսության մեջ, Հ. Ինճիկյանը ցույց է տալիս կայսրության սոցիալ-տնտեսական զարգացման մի այլ առանձնահատկությունը ևս. այլազգի բուրժուազիան, տիրապետող դիրք ունենալով տնտեսության մեջ, գտնվում էր թուրքական ֆեոդալների, ավելի ուշ՝ հողատիրական-բուրժուական վերնախավի քաղաքական ճնշման տակ։

Հետազոտողը արձանագրում է, որ թուրք ազգային բուրժուազիան, այսինքն տիրապետող ժողովրդի բուրժուազիան, ձևավորվեց XIX դարի վերջին միայն, երբ դանդաղորեն փորձում էր դուրս մղել իր տնտեսական մրցակիցներին։ Սակայն նա զարգանում էր շատ ավելի դանդաղ, որը երկրի ընդհանուր առաջընթացի չափազանց ցածր տեմպերի հիմնական պատճառներից մեկն էր։

Հեղինակի մեկնաբանությամբ, գլխավորապես հիշյալ հանգամանքով պետք է բացատրել քաղաքական միջոցառումների հաճախակի օգտագործումը այլազգի բուրժուազիայի գործնական ակտիվությունը ճնշելու հարցում։ Տնտեսապես թույլ, ֆեոդալական տարրերի հետ սերտորեն կապված թուրք բուրժուազիան լուրջ դիմադրության էր հանդիպում ամուր դիրքեր ունեցող այլազգի բուրժուազիայի կողմից։ Իսկ ստեղծված իրավիճակից հաճախ օգտվում էին մեծ տերությունները։ Այդ պայքարը հետզհետե սրվեց, ընդունեց մինչ այդ չտեսնված, ահավոր ձևեր։ Այսպիսի պայմաններում «օսմանյան» բուրժուազիան դադարեց որպես բազմազգ տարրերի միասնություն և պատմական երևույթ գոյություն ունենալուց։ Այլազգի բուրժուազիան, որպես ինքնուրույն գործոն, այլևս չէր կարող պահպանվել և նրա բեկորները դարձան թուրք ազգային բուրժուազիայի տարրերից մեկը։

Դրվում հեղինակի ուշադրությունից դուրս չի մնացել կայսրության բուրժուազիայի ձևավորման և զարգացման պրոցեսի վրա արտասահմանյան կապիտալի ազդեցության խնդիրը։ Բազմաթիվ թուրք հեղինակներ կապիտալիստական հարաբերությունների առկայությունը բացատրում են միայն այս գործոնի ակտիվ և անմիջական դերով։

Փաստական նյութի հիման վրա Հ. Ինճիկյանն ապացուցում է, որ գլխավորապես ինքնուրույն ուղիով է ընթացել նաև Օսմանյան կայսրությունը։ Դրան անշուշտ նպաստել են նրա աշխարհագրական դիրքը, արտասահմանյան կապերը, սակայն ներքին առաջընթացը եղել է որոշիչը և նա իր կնիքն է դրել հետագա բոլոր տեղաշարժերի վրա։ Արտաքին ազդեցությունը կատարել է երկակի դեր՝ մի կողմից նպաստել է ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների հաստատման պրոցեսին, մյուս կողմից, միանալով ներքին ռեակցիոն ուժերի հետ, խանգարել է նոր հասարակական հարաբերությունների ամրապնդմանը, հանդիսացել թուրքական հետադիմական կարգերի դաշնակիցը և ազգային-ազատագրական պայքարի թշնամին։

Հատուկ ուշադրության է արժանի «օսմանյան» բուրժուազիայի զարգացման Հ. Ինճիկյանի առաջադրած պերիոդիզացիան։ Հեղինակն առանձնացնում է այդ պրոցեսի 4 փուլ, նշելով բուրժուազիայի առանձին ազգային խմբերի տեղն ու դերը երկրի կապիտալիստական զարգացման զանազան էտապներում։

Առաջին փուլում, որը սկիզբ է առել XVIII դարի վերջերին և շարունակվել մինչև Թանզիմաթի շրջանը, թուրքական և ընդհանրապես մուսուլմանական բուրժուազիան դեռ չէր ձևակերպվել, մինչդեռ այլազգի բուրժուազիան արդեն որոշակի դեր էր կատարում և ձևավորվում էր հար և նման եվրոպական բուրժուազիայի կազմավորման կլասիկ օրինակին։ Թանզիմաթը՝ բարենորոգման շրջանը, հենց նշված պրոցեսի ուղղակի արդյունքն էր, որը ստիպված էին ընդունել երկրի տիրող շրջանները նաև իրավական տեսակետից։

Երկրորդ փուլն ընդգրկում է անցյալ դարի կեսերից մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի վերջը, երբ ազգանքափողային, բուրժուական հարաբերությունները մուտք են գործում երկրի տնտեսության գլխավոր բնագավառը գյուղատնտեսության մեջ և հողագործության զարգացման տենդենցը տանում է նրան դեպի զարգացման պրուսական ուղին։ Ամրապնդվում են այլազգի բուրժուազիայի դիրքերը, իսկ թուրք բուրժուազիան ապրում է իր ձևավորման շրջանը և կատարում առաջին քայլերը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում։ «Օսմանյան» բուրժուազիայի տարբեր ազգային խմբեր ձգտում են համագործակցել, կատարվում են դասակարգային միասնություն ստեղծելու փորձեր, միասնություն, որն անհրաժեշտ էր նոր հասարակարգի թույլ ծիլերը թե՛ ֆեոդալական պետության քաղաքականությունից և թե՛ օտար կապիտալի մրցակցությունից պաշտպանելու համար։ Սակայն թուրքական մարտնչող շովինիզմի գաղափարախոսությունը և պրակտիկան հնարավոր չէր հաղթահարել կամ շրջանցել և բուրժուական հարաբերություններն այստեղ չհանդիսացան հաստատուն դասակարգային միասնության հիմք։

Բուրժուազիայի զարգացման երրորդ փուլը՝

XIX դարի 80-ական թթ. մինչև երիտթուրքական հեղափոխությունը, կարելի է բնութագրել որպես թուրքական և ընդհանրապես մուսուլմանական բուրժուազիայի տնտեսական վիճակի ամրապնդման շրջան, որն իրագործվեց մասամբ շնորհիվ օսմանյան պետության կիրառած քաղաքական միջոցառումների։ Այլասդգի բուրժուազիան ստիպված էր այդ տարիներին որոշ բնագավառներում իր դիրքերը զիջել նորեկներին։

Վերջին, չորրորդ փուլը համընկնում է երիտթուրքերի տիրապետության տասնամյակին։ Սկզբնական շրջանում այլազգի բուրժուազիան շարունակում է ամրապնդել իր դիրքերը, իսկ թուրք ազգային բուրժուազիան զգալի աղդեցություն է ձեռք բերում քաղաքականության բնագավառում, որը որոշ չափով հավասարակշռում է նրա տնտեսական թուլությունը։ Այս վիճակը շարունակվում է մինչև նրա ախոյանների սեփականազրկումը և ֆիզիկական ոչնչացումը, որը, ի դեպ, չի սահմանափակվում միայն հայ բուրժուազիայով և միայն առաջին համաշխարհային պատերազմի տարիներով։

Այսպիսով, չորրորդ փուլում քաղաքական միջոցներով և ուժի օգտագործմամբ արհեստականորեն վերացվեց այլազգի բուրժուազիայի որոշակի դերը երկրի տնտեսական զարգացման մեջ։ Այս երևույթը շոշափելի բացասական հետևանքներ ունեցավ։ Բազմաթիվ զարգացած ու շեն շրջաններ բայքայվեցին և ետ շպրտվեցին տասնյակ տարիներով, երկրի կապիտալիստական զարգացումը զգալիորեն կասեցվեց և տնտեսական ընդհանուր մակարդակը մեծ անկում ապրեց, որ վերոհիշյալից բացի պատերազմում Թուրքիայի պարտվելու հետևանքն էր։ Թուրքական ազգային բուրժուազիան, լինելով ավելի ռեակցիոն, քան ուրիշ երկրների բուրժուազիան, իր նպատակն իրագործեց երկրի համար չափազանց թանկ գնով։

Հեղինակի կատարած գիտական վերլուծումների շնորհիվ ընթերցողին ներկայացվում է XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի Օսմանյան կայսրության տնտեսական վիճակի պատկերը՝ ըստ տնտեսության առանձին բնագավառների ու երկրի շրջանների, որոնցով պայմանավորված էր նաև բուրժուազիայի այս կամ այն ազգային խմբի զարգացման աստիճանը կապիտալիստական ձեռնարկատիրության ասպարեզներում։

Գրքում, նշված կարևոր խնդիրներին զուգահեռ, արծարծվում են նաև հետաքրքրական այլ պրոբլեմներ։ Սակայն դրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ, թուրք ազգային բուրժուազիայից առանձնացվող կոմպրադորների հարցը, պահանջում է հավելյալ հետազոտական աշխատանք և հիմնավորում։ Աշխատության մեջ, առանձին ասպեկտները ներկայացնելիս, այնուամենայնիվ զգացվում է փաստական տվյալների պակաս, որը, ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, կարող է լրացվել Օսմանյան կայսրության երբեմնի հպատակ ժողովուրդների լեզուներով եղած աղբյուրներն ու գրականությունն ընդգրկելով։

Հ. Ա. ԿՈՐԽՄԱԶՅԱՆ

ԱՆՏՈՒԱՆ ՄԵՅԵ, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1978, 822 էջ, գինը 4 ռ. 83 կ.։

Հայագիտությունը եղել է ֆրանսիացի մեծ գիտնական, լեզվաբան, մշակութային ու հասարակական գործիչ Անտուան Մեյեի (1866—1936) շուրջ կեսդարյա բեղմնավոր գիտական գործունեության հիմնական բնագավառներից մեկը։ Նրա գրչին են պատկանում հայոց լեզվին, հայ բանասիրությանը և մշակույթի բազմապիսի հարցերին նվիրված արժեքավոր գիտական մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ, գրախոսություններ ու հառեր, որոնք ցարդ մատչելի են եղել գլխավորապես մեր գիտական մտավորականության մի նեղ շրջանին։ Վաղուց էր զգացվում մեծ հայագետի աշխատությունների, հատկապես հայագիտական հետազոտությունների կենտրոնացման և հայերեն թարգմանության կարիքը։

Գրախոսվող գիրքը Մեյեի աշխատությունների ստվարածավալ (822 էջ), բայց դեռևս ոչ լիակատար ժողովածուն է, որը նրա հայագիտական ժառանգությունը հայ ընթերցողին ներկայացնելու, նրա «լեզվաբանական և հայասիրական մտքերին ծանոթանալու պահանջի մասնակի իրականացումն է միայն» (էջ 7)։ «Հայագիտական հետազոտությունների մատենաշարի» այս գիրքը (խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջահուկյան) հրատարակության է պատրաստել Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը։